ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/299-2022 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 27.12.2021թ. թիվ 8.1-600 գրության հիման վրա, 10.01.2022թ. թիվ 26/26-1/299-2022 գրությամբ նախաձեռնել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/12 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.12.2021թ. թիվ 8.1-600 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար հեռահաղորդակցման մալուխների ձեռքբերման համար հայտարարված «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-04/21(2)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի միջև 11.06.2021թ. կնքվել է թիվ 2.52 գնման պայմանագիրը: Վերոնշյալ պայմանագրով «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքը: Սակայն ստանձնած պարտավորությունները «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն չի կատարել, չնայած այն հանգամանքին, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 03.11.2021թ. թիվ 8.1-522 գրությամբ տեղեկացրել էր ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ: 22.12.2021թ. թիվ 8.1-594 գրությամբ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն ծանուցել է «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ:(...)»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/12 ընթացակարգի շրջանակներում 17.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/12 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի միջև 11.06.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-04/21(2)» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի									
Հ/Հ	Անվանումը	Ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	Ենթակա քանակը	Վերջնաժամկետը
1	Հեռահաղորդակցման մալուխներ	СКК, ТПП 50×2×0,4, Самарский завод СКК	մետր	1587	1587000	1000	ք.Երևան 0042, Ի.Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ	1000	Մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ

3. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ուղղված 03.11.2021թ. թիվ 8.1-522 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր մինչև 30.09.2021թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ մատակարարել ՏՊՊ(ТПП) 50×2×0,4 տիպի մալուխ, որը չի մատակարարվել սահմանված ժամկետում:

Սույնով տեղեկացնում եմ, որ 15 օրացուցային օրվա ընթացքում Պայմանագրով Ձեր պարտավորությունների չկատարման դեպքում, հիմնվելով Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ) ենթակետի վրա ««Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն ստիպված է լինելու միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը»:

4. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ուղղված 22.12.2021թ. թիվ 8.1-594 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր մինչև 30.09.2021թ. ներառյալ մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքը: Սակայն վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ չի կատարել, չնայած այն հանգամանքին, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գրությամբ տեղեկացրել էր ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ու «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 և 8.9 կետերի դրույթները, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ միակողմանի լուծում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 23.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/299-2022 գրությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 27.12.2021թ. թիվ 8.1-600 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի միջև 11.06.2021թ. կնքվել է թիվ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-04/21(2)» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

5. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի									
Հ/Հ	Անվանումը	Ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	Ենթակա քանակը	Վերջնաժամկետը
1	Հեռահաղորդակցման մալուխներ	СКК, ՏՊՊ 50×2×0,4, Самарский завод СКК	մետր	1587	1587000	1000	ք.Երևան 0042, Ի.Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ	1000	Մինչև 2021թ. սեպտեմբերի 30-ը ներառյալ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ուղղված 03.11.2021թ. թիվ 8.1-522 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր մինչև 30.09.2021թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ մատակարարել ՏՊՊ(ՏՊՊ) 50×2×0,4 տիպի մալուխ, որը չի մատակարարվել սահմանված ժամկետում:

Սույնով տեղեկացնում եմ, որ 15 օրացուցային օրվա ընթացքում Պայմանագրով Ձեր պարտավորությունների չկատարման դեպքում, հիմնվելով Պայմանագրի 2.1.7 կետի և 2.1.7.1 կետի բ) ենթակետի վրա ««Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն ստիպված է լինելու միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը»:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ուղղված 22.12.2021թ. թիվ 8.1-594 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի շրջանակներում «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն պարտավորվում էր մինչև 30.09.2021թ. ներառյալ մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքը: Սակայն վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ չի կատարել, չնայած այն հանգամանքին, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գրությամբ տեղեկացրել էր ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ու «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 և 8.9 կետերի դրույթները, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ միակողմանի լուծում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ միջև 11.06.2021թ. կնքված թիվ 2.52 պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 23.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***10 օրից ավելի***:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ն խախտել է իր և «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի միջև 11.06.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.01.2022թ. թիվ 26/26-1/299-2022 գրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**